ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավանի համայնքապետարան, գ.Շենավան
հեռ. 077-57-07-57

ՈՐՈՇՈՒՄ N 11-Ա

02 Մարտ 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 06-086-0011-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 2 – րդ կետի 1 – ին մասով, 4 – րդ կետի 1 – ին մասով «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 38 – րդ հոդվածով, ՀՀ Կառավարության «Ինքնակամ կառույցների օրինականացման եվ տնօրինման կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 18 – ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով ՀՀ գործող հողային օրենսգրքի 64 – րդ հոդվածի 2 – րդ կետով և հիմք ընդունելով հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.03.1992թ – ի թիվ 13 որոշումը, հողամասի սահմանների վերաբերյալ Սարգիս Թամազյան ԱՁ – ի կողմից կազմված հատակագիծը, թիվ 22042014-06-0016 սեփականության վկայականը և հարգելով համայնքի բնակիչ Արման Դունամալյանի դիմում-խնդրանքը այն մասին, որ Շենավան համայնքում 06-086-0011-0008 ծածկագրի տակ գտնվող 0.13հա տնամերձ հողամասի վրա 2019թ – ին ինքնակամ կառուցել է 34.88քմ ընդհանուր մակերեսով բնակելի տուն, 5.72քմ մակերեսով աստիճանահարթակ, և թվով 4 ինքնակամ ձևափոխումներ՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

Նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և քանի, որ կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60 – րդ հոդվածի ցանկում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրենքի ուժով օրինականացնել և ճանաչել Արման Լևոնի Դունամալյանի /ծնված1941թ./ սեփականության իրավունքը Շենավան համայնքում 06-086-0011-0008 ծածկագրի տակ սեփականության իրավունքով իրենց պատկանող 0.13 հա տնամերձ հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 34.88 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 5.72 մակերեսով աստիճանահարթակ, և թվով 4 ինքնակամ ձևափոխումներ:

2. Հանձնարարել հաշվապահին իրականացնելու ինքնակամ շինությունների համար օրենքով սահմանված վճարի գանձման աշխատանքները գանձելով՝ 19.625 (տասնիննը հզար վեցհարյուր քսան հինգ) ՀՀ դրամ

3. Որոշումն ընդունելու օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 – օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել համապատասխան ստորաբաժանմանը, որպես հիմք վերը նշված անշարժ գույքերին պետական գրանցում տալու համար:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայցման պահից:

Համայնքի ղեկավար՝ Մ.Մխիթարյան